ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

ԵԹԷ ուշադրութեան չառնենք հայոց եկեղեցու անկեալ դրութիւնը մինչև Դաւիթ-Դանիէլ կաթողիկոսների կռիւների վերջը՝ էջմիածինը երբէք այսպիսի ողորմելի և տնանկ վիճակի մէջ չէ եղել, ինչպէս այսօր։ Հանգուցեալ Հայրապետի անիշխանութեան հասնող բարի բնաւորութեան պատճառով բոլոր մեր հաստատութիւնները քայքայուեցան, շնորհիւ մեր եկեղեցական վարիչների ապիկարութեան և վախկոտութեան, էջմիածնի և միւս վանքական կալուածները զրկուեցին իրանց եկամուտներից, դպրոցների հաստատութիւնները ընկան թեթևսոլիկ մարդկանց ձեռքը և հայ ժողովրդի վիճակը տնօրինողները դարձան մարդիկ, որոնք հայ ազգի գաղափարական ձգտումները սպանեցին, ոտնակոխ անելով ամեն սրբութիւն։ Հասարակական խնդիրները և պաշտօնեաների վիճակը սկսեցին տնօրինուել կուսակցական շահերի ազդեցութեան տակ։ Եւ այսպիսի մի ծանր ժամանակ նորընտիր կաթողիկոսի առաջին քայլերից է կախուած նրա ապագայ գործունէութիւնը։

Առաջին խնդիրը, որ կարօտ է լուծման, էջմիածնի և վանքերի տնտեսական դրութեան բարւոքումն է։ Նախ պէտք է էջմիածնապատկան հողերում ապրող գիւղացիների հետ յարաբերութիւնը կանոնաւորել և հողերը տալ հայ ժողովրդին, պահելով էջմիածնի կրթական և տնտեսական կարիքները ապահովելու համար յայտնի քանակութեամբ հող։ Երկրորդ՝ պէտք է մի որևէ մասնաւոր առևտրական ընկերութեան միջոցով մտածել էջմիածնի ազատ մնացած հողերի բարւոքման մասին։ Երրորդ՝ պէտք է նոյնպիսի ընկերութեան միջոցով վանքապատկան այլ ազատ մնացած հողերի և հանքերի մշակման մասին հոգալ։ Չորրորդ՝ պէտքէ թէ հոգևոր դպրոցների և թէ ծխական դպրոցների կանոնադրութիւնները և ծրագիրները ձեռնհաս

մարդկանց ձեռքով վերաքննութեան ենթարկել և նրանց մասին հաստատ կերպով հրատարակուած և անմշակ կարգադրութիւնները նորից վերաքննել ու փոխել այն բոլոր կէտերը, որոնք պատճառ են լինում մեր դպրոցների խառնակ դրութեան։ Հինգերորդ՝ պէտք է վերջ տալ Էջմիածնի միաբանութեան մէջ տիրապետող մանր և անարժան ինտրիգներին ու կռիւներին։

Ցայտնի է, որ մեր վանքաբնակ հայրերը իրենց ժամանակի մեծ մասը գործ են դնում միմեանց դէմ դատաստանական գործեր ստեղծելու, այս կամ այն եղբայրակից վարդապետի կամ սրբազանի հարիւր տարի առաջ գողացած 5 կամ 10 ռուբլի փողի մասին գրելու և հերքելու վրայ։ Այս բոլորին պէտք է վերջ տալ։ Վեցերորդ՝ պէտք է ժողովել Էջմիածնի հին միաբաններին, որոնք իրենց բոլոր պակասութիւններով հանդերձ՝ միշտ աւելի շատ են մտածել և հոգացել Էջմիածնի տնտեսական և կրօնական շահերի մասին, քան շատ երիտասարդ գիտնականներ։ Երիտասարդ վարդապետներին պէտք է ուղարկել պաշտօններով ժողովրդի մէջ գործելու, ուր աւելի լայն ասպարէզ կայ նրանց երիտասարդական եռանդի համար, որը Էջմիածնում նրանք վատնում են անմիտ պօլիտիկանութեան փոքրոգի ինտրիգների վրայ։ Եօթներորդ՝ պէտք է Էջմիածնի ճեմարանը իրօք դարձնել մի բարձրագոյն դպրոց, մի համալսարան, ուր կարողանան աշխատել ընդունակ հոգևորականներ և աշխարհականներ առանց թոյլ տալու, որ նրանց վիճակը ամեն օր խաղալիք դառնայ ողորմելի մարդկանց ձեռքին։

Հայրապետական Դիւանը պէտք է կառավարել ոչ թէ 20 ռուբլիանոց գրագիրների ձեռքով, որոնք ընդունակ են պատահական մարդկանց ձեռքին խաղալիք լինել, այլ լուրջ և պատրաստուած անձանց հաւատալ այդ կարևոր պաշտօնը, որպէսզի կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնները չնչին պատճառներով չխանգարուին և Հայրապետը ծանր դրութեան մէջ չընկնի այդ պատճառով։

Այս ամենը գործունէութեան ընդարձակ ասպարէզ է բաց անում ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի առաջ, որ իւր կորովի կամքով և խելամիտ փորձառութեան շնորհիւ անկասկած կարող կլինի բարւոքել Հայ եկեղեցու և ժողովրդի ներկայ աղեռալից կեանքի ծանր պայմանները։